Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
սեպտեմբերի 3-ի N 593 - Ա որոշման

«Լապարասկոպիկ համակարգի նվիրաբերում»
ծ ր ա գ ի ր

1.	**Ծրագրի նպատակը**	Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալին լապարասկոպիկ համակարգի նվիրաբերում
2.	**Ծրագրի բարեգործական որակման նպատակը**	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	**Բարեգործը**	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ՝ 02269952)
4.	**Ծրագիրը կատարողը**	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ՝ 02269952)
5.	**Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը**	Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ (ՀՀ, քաղ. Երևան 0075, Մուրացանի փող., 115 շենք)՝ առողջապահական բնագավառ
6.	**Ծրագրի բյուջեն**	44 184.84 եվրոյին համարժեք դրամ
7.	**Բարեգործություն ստացողը**	Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալ (ՀՀ, քաղ. Երևան 0075, Մուրացանի փող., 115 շենք) Ընտրությունը կատարվել է համաձայն բարեգործությունն ստացողի աջակցության խնդրանքի:
8.	**Ծրագրի իրականացման տևողությունը**	2019 թվականի օգոստոսի 20-ից մինչև նոյեմբերի 1-ը:

9.	**Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը**	Ձինծառայողների համար անհրաժեշտ լապարասկոպիկ միջամտությունների իրակա-նացման համար նախատեսվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալին նվիրաբերել լապարասկոպիկ համակարգ՝ սարքեր, սարքավորումներ և պարագաներ՝ 44 184.84 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ: Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2019 թվականի օգոստոսի 20-ից մինչև նոյեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում:
10.	**Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը**	Տվյալ ծրագրի շրջանակներում նախատեսվում է լապարասկոպիկ համակարգի՝ սարքերի, սարքավորումների և պարագաների ներմուծում՝ 44 184.84 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով:
11.	**Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը**	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	**Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ**	Չի նախատեսվում:
13.	**Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը**	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թ.-ի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ